### *1.2.4. Տրանսպորտ*

***Բեռնափոխադրումներ:*** 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ աճել է 40.4%-ով:

**Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

| | 2002թ. հունվար-հոկտեմբեր | 2002թ. հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ,% | 2002թ. հոկտեմբեր | 2002թ. հոկտեմբերը 2002թ. սեպտեմբերի նկատմամբ,% |
|---|---|---|---|---|
| *Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա* | ***5964.6*** | ***140.4*** | ***863.7*** | ***115.7*** |
| *այդ թվում.* | | | | |
| երկաթուղային տրանսպորտով | ***1651.4*** | ***141.7*** | ***222.2*** | ***112.7*** |
| *որից.* | | | | |
| արտահանվել են բեռներ | 141.5 | 99.0 | 15.8 | 95.8 |
| ներկրվել են բեռներ | 807.8 | 111.8 | 96.1 | 109.5 |
| ներհանրապետական փոխադրումներ | 702.1 | 2.3անգամ | 110.3 | 118.7 |
| ավտոտրանսպորտով | ***3780.4*** | ***167.6*** | ***571.9*** | ***112.8*** |
| *որից.* | | | | |
| արտահանվել են բեռներ | 88.5 | 94.8 | 8.1 | 120.9 |
| ներկրվել են բեռներ | 258.3 | 106.1 | 34.3 | 101.5 |
| ներհանրապետական փոխադրումներ | 3433.6 | 1.8անգամ | 529.5 | 113.5 |
| օդային տրանսպորտով[1] | ***6.9*** | ***75.6*** | ***0.7*** | ***116.7*** |
| *որից.* | | | | |
| արտահանվել են բեռներ | 2.7 | 79.4 | 0.2 | 66.7 |
| ներկրվել են բեռներ | 4.2 | 73.7 | 0.5 | 166.7 |
| խողովակաշարային տրանսպորտով | ***525.9*** | ***64.3*** | ***68.9*** | ***165.9*** |

***Երկաթուղային տրանսպորտ***: 2002թ. հունվար-հոկտեմբերին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ աճել է 41.7%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 48.9% (2001թ. հունվար-հոկտեմբերի 62.0%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 8.6% (2001թ. հունվար-հոկտեմբերի 12.2%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 42.5% (2001թ. հունվար-հոկտեմբերի 25.8%-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2002թ. հունվար-հոկտեմբերին 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ անտառային բեռների (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլ), փոխադրման ծավալն ավելացել է 29.5 անգամ, հանքային շինարարական նյութերինը՝ 8.4, հանքաքար երկաթի և մանգանի փոխադրման ծավալը՝ 5.6, սև մետաղներինը՝ 5.3, քարածխինը՝ 3.4, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 2.8, ցեմենտինը՝ 2.5 անգամ, նավթ և նավթամթերքինը՝ 17.9%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 5.0%-ով: Սև մետաղների ջարդոնի փոխադրման ծավալը նվազել է 16.6%-ով:

Վագոնների միջին օրական բեռնաթափումը 2002թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 79 վագոն և 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ ավելացել 23 միավորով, իսկ բեռնումը կազմել է 48 վագոն և ավելացել 21 միավորով: Նույն ժամանակաշրջանում վագոնապտույտը կազմել է 8.2 օր և 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ արագացել է 2.1 օրով:

[1] *Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:*

***Ավտոմոբիլային տրանսպորտ:*** 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 67.6%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 6.8% (2001թ. հունվար-հոկտեմբերի 10.8%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 8.8% (2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ մնացել է անփոփոխ), արտահանված բեռների բաժինը` 2.3% (2001թ. հունվար-հոկտեմբերի 4.1%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 6.8% (2001թ. հունվար-հոկտեմբերի 9.6%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը` 90.9% (2001թ. հունվար-հոկտեմբերի 85.1%-ի դիմաց):

***Օդային տրանսպորտ:*** 2002թ. հունվար-հոկտեմբերին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշի նկատմամբ նվազել է 24.4%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 60.9% (2001թ. հունվար-հոկտեմբերի 62.6%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը` 39.1% (2001թ. հունվար-հոկտեմբերի 37.4%-ի դիմաց):

***Խողովակաշարային տրանսպորտ:*** 2002թ. հունվար-հոկտեմբերին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշի նկատմամբ նվազել է 35.7%-ով:

**Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների 2002թ. հունվար-հոկտեմբերին (տոկոսներով)**




2001թ. հունվար-հոկտեմբերին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 27.4%, ավտոմոբիլայինը` 53.2%, օդայինը` 0.2%, խողովակաշարայինը` 19.2%:

***Բեռնաշրջանառություն:*** 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ նվազել է 20.7%-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն
ըստ տրանսպորտի առանձին տեսակների

| | 2002թ. հունվար-հոկտեմբեր | 2002թ.հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ,% | 2002թ. հոկտեմբեր | 2002թ. հոկտեմբերը 2002թ. սեպտեմբերի նկատմամբ,% |
|---|---|---|---|---|
| *Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ* | *1133.9* | *79.3* | *153.2* | *141.6* |
| *այդ թվում`* | | | | |
| երկաթուղային տրանսպորտով | 366.4 | 127.9 | 51.1 | 115.3 |
| ավտոտրանսպորտով | 54.9 | 148.4 | 8.8 | 117.3 |
| օդային տրանսպորտով | 5.0 | 69.4 | 0.6 | 2.0անգամ |
| էլեկտրատրանսպորտով | 707.6 | 64.3 | 92.7 | 165.2 |

***Ուղևորափոխադրումներ***: 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 1.7%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն
ըստ տրանսպորտի առանձին տեսակների

| | 2002թ. հունվար-հոկտեմբեր | 2002թ.հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ,% | 2002թ. հոկտեմբեր | 2002թ. հոկտեմբերը 2002թ. սեպտեմբերի նկատմամբ,% |
|---|---|---|---|---|
| *Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ* | *129217.8* | *101.7* | *13694.5* | *104.5* |
| *այդ թվում`* | | | | |
| երկաթուղային տրանսպորտով | 1108.8 | 108.4 | 95.8 | 84.7 |
| ավտոտրանսպորտով | 106405.0 | 105.1 | 11194.2 | 104.9 |
| օդային տրանսպորտով[1] | 712.1 | 113.1 | 74.4 | 86.0 |
| էլեկտրատրանսպորտով | 20991.9 | 87.0 | 2330.1 | 104.2 |

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտային առանձին տեսակների
2002թ. հունվար- հոկտեմբերին (տոկոսներով)




[1] *Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:*

2001թ. հունվար-հոկտեմբերին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.8%, ավտոմոբիլային տրանսպորտինը` 79.7%, օդային տրանսպորտինը` 0.5% և էլեկտրատրանսպորտինը` 19.0%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2002թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 58.7%, իսկ տրոլեյբուսով` 23.6%, տրամվայով` 15.3% և ճոպանուղով` 2.4%:

*Ուղևորաշրջանառություն:* 2002թ. հունվար-հոկտեմբերին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և անհատ ձեռնարկատերերի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ աճել է 6.6%-ով:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն
ըստ տրանսպորտի առանձին տեսակների

| | 2002թ. հունվար-հոկտեմբեր | 2002թ.հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար-հոկտեմբեր ի նկատմամբ, % | 2002թ. հոկտեմբեր | 2002թ. հոկտեմբերը 2002թ. սեպտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|
| ***Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ*** | ***2138.1*** | ***106.6*** | ***232.9*** | ***100.5*** |
| *այդ թվում`* | | | | |
| երկաթուղային տրանսպորտով | 41.5 | 102.2 | 4.2 | 82.4 |
| ավտոտրանսպորտով | 1395.5 | 110.2 | 156.8 | 106.1 |
| օդային տրանսպորտով | 615.9 | 10.3.0 | 62.5 | 89.4 |
| էլեկտրատրանսպորտով | 85.2 | 84.6 | 9.4 | 104.4 |

*Տրանսպորտային պատահարներ:* Հանրապետությունում 2002թ. հունվար-հոկտեմբերին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, ճանապարհատրանսպորտային պատահարները 2001թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ նվազել է 3.6%-ով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

| | 2002թ. հունվար-հոկտեմբեր | 2002թ.հունվար-հոկտեմբերը 2001թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ, % | 2002թ. հոկտեմբեր | 2002թ. հոկտեմբերը 2002թ. սեպտեմբերի նկատմամբ, % |
|---|---|---|---|---|
| ***Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհամենը*** | ***810*** | ***96.4*** | ***125*** | ***109.6*** |
| Զոհվել են, մարդ | 196 | 96.5 | 25 | 45.4 |
| Վիրավորվել են ,մարդ | 990 | 98.4 | 150 | 104.2 |